



Հայ-Քրտական Յարաբերություններու Շուրջ Հարցազրոյց՝ Վահրամ Պետրոսեանի Հետ

0 Featured-News, Գաղութային November 3, 2015

PRINT EMAIL A- A-



Երկուշաբթի, 2 նոյեմբեր 2015-ին, «Ազդակ»-ի «Արսէն Չաղլասեան» ժողովասենեակին մէջ տեղի ունեցաւ հարցազրոյց Երեւանի պետական համալսարանի Հայագիտական հետազոտություններու հիմնարկի հայ-քրտական յարաբերություններու բաժնիի ղեկավար եւ միջազգային յարաբերութեանց բաժանմունքի ընկալական Վահրամ Պետրոսեանի հետ: Հայ-քրտական յարաբերություններուն շուրջ հարցազրոյցը վարեց «Ազդակ»-ի միջազգային լուրերու խմբագիր Վահրամ Էմմիեան:

Խօսելով հայ-քրտական յարաբերություններուն մասին՝ Վահրամ Պետրոսեան յայտնեց, որ գառնոյ կարելի է բաժնել երեք հանգրուանի՝ 19-րդ դարու կէսէն մինչեւ 1923՝ Թուրքիոյ Հանրապետութեան հաստատումը, 2-րդ շրջանը՝ 1923-էն 1991՝ Խորհրդային Միութեան փլուզումը, իսկ երրորդ հանգրուանը 1991-էն կ'երկարի մինչեւ մեր օրերը: Ան նշեց, որ աւելի ճիշդ է խօսիլ հայ-քրտական առնչութեան մասին եւ ոչ թէ յարաբերություններու, որովհետեւ երկու կողմերուն միջեւ պետական յարաբերություններ երբեք չեն եղած:

Ան յայտնեց, որ 1890-1923 շրջանը կարելի է նկատել յարաբերութեանց հաստատման կարելիութեան հետազոտման հանգրուան, որ աւարտեցաւ յուսախաբութեամբ: 2-րդ հանգրուանին եւս ձեռքբերումները մեծ ու հաստատ չէին, իսկ 3-րդ հանգրուանը Հայաստանի Հանրապետութեան եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան անկախացումով նոր իրողություն ստեղծեց եւ քիւրտերուն կողմէ համագործակցութեան ստեղծումի կարելիություն նկատուեցաւ:

Անդրադառնալով քրտական քաղաքական կառոյցներու Հայոց ցեղասպանութեան հարցին նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքին՝ Պետրոսեան յայտնեց, որ քիւրտերուն գերակշիռ համեմատությունը կ'ընդունի Հայոց ցեղասպանությունը, սակայն այլ ընկալումներ կան եզրերու օգտագործման եւ հատուցման հարցով: ՔԱԿ-ը միանշանակ կերպով կ'ընդունի ցեղասպանությունը, իսկ Հիւսիսային Իրաքի քրտական ինքնավար շրջանի կառավարությունը պաշտօնական մակարդակով չէ ընդունած, որովհետեւ գոյություն ունի Թուրքիոյ հետ յարաբերութեանց վնասելի գոյույթին մը: Ան նշեց, որ վերջերս ինքնավար շրջանի խորհրդարանին ներկայացուած Հայոց ցեղասպանութեան ճանաչման բանաձեւին աւելի Թալապանիի կուսակցությունն էր, որ կը զօրակցեր, սակայն պաշտօնատարները երբեք կասկածի տակ չեն դներ պատմական փաստը եւ այդ պաշտօնատարներուն շարքին են Պարզանի ընտանիքը:

Ինչ կը վերաբերի ժողովրդային մակարդակի վրայ ցեղասպանութեան հարցին նկատմամբ ցուցաբերուած քրտական կեցուածքին՝ Պետրոսեան յայտնեց, որ վերաբերմունքը կը տարբերի շրջանէ շրջան, օրինակ՝ Տիգրանակերտի զագա-ալիւի շրջանակը կը մերժէ ցեղասպանութեան ամբողջ մեղքին միայն քիւրտերուն ուսերուն բեռնուիլը:

Հարցազրոյցի վերջաւորութեան Պետրոսեան անդրադարձաւ նաեւ հայ-քրտական յարաբերություններու հեռանկարին եւ նշեց, որ մենք քիւրտերուն հետ համագործակցութեան որոշակի դաշտ ունինք:

Հարցազրոյցին տեսերիզը յառաջիկայ օրերուն պիտի տեղադրուի «Ազդակ»-ի կայքին, ինչպէս նաեւ հայաստանեան «Նոյեան Տապան» լրատու գործակալութեան կայքին վրայ:

⤵